

Հ. ՍԵՐՈՐԷՎ ԿՐԴ. ԱԳԸԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1910–1980)

Յանկարծական ու անակնկալ իրողութիւն մը եղաւ՝ ամէնուս սիրելի Հ. Սերորէ Կրդ. Ագըլեանի անդարձ մեկնումը. սատեցաւ յանկարծ արցունքը մեր աչքերուն, որոնք՝ կարծէք՝ չէին հաւատար զուժաբեր հեռազանգին, որ մեծ սուգով կը համակէր Մխիթարի Տունը, Փարիզէն Վենետիկ:

Խորապէս զգացուած, բայց համակամ՝ աստուածային Նախախնամութեան խորին ծրագիրներուն, քրիստոնէական հաւատքի աչքերով՝ սրբազան կոչ կը նկատենք արդարին մահը, կամ երանաւետ անցք՝ դէպի երկնաւոր Հօր յաւերժական Տունը. նուիրական Զատիկ: Այդպէս ալ եղաւ, անտարակոյս, այս բազմավաստակ Վարդապետին համար. քաղցր՝ ձայն մը, անշուշտ, հնչեց երկնքէն. «Ծառայ բարի եւ հաւատարիմ, մո'ւտ յուրախութիւն Տեառն քոյ». եւ Հ. Սերորէ Կրդ. Ագըլեան, բազմամեայ վաստակաշատ աշխատանքէ մը վերջ, զոր քառասունեակնէ տարիներ առաջ խանդավառօրէն ստանձնած էր՝ Սուրբ Եկեղեցւոյ եւ իր պաշտելի Ագգիւն անվերապահ ծառայութեան նուիրելով ինքզինք, խաղաղիկ մտաւ հոգեւոյս արդարներուն անճառ բնակարանը:

Այո՛, տառապազին օրեր անցուց անիկա՝ իր երկրաւոր պանդխտութեան աւարտին, շուրջ երկու ամիս պայքարելով անողոր եւ խորհրդաւոր հիւանդութեան մը դէմ, եւ սրտաթունդ պահելով բոլորս՝ ժամէ ժամ հասնող հեռագրալուրերով. մերթ յուսալիւր ակընկալութիւններ՝ աստղերու նման կը փայլէին մռայլ հորիզոնին վերայ, եւ պահ մը նոյնիսկ ապագայի գեղեցիկ երազներով կ'օրօրէին մեր մտքերը. քաջ հասաւ դժիւսեմ ժամը. 13 Հոկտեմբեր 1980: Հիւժած՝ Ֆիզիքայէս, սակայն գիտակից ու համակամ, հոգեպէս ալ լիովին մխիթարուած՝ իր միաբանակիցներու գուրգուրալից վարմունքէն եւ ջերմ աղօթքներէն, ու մինչեւ վերջ քաջալերուած՝ ազգականներու, մտերիմ քարեկամներու եւ նախկին սաներու գորո-

վալիւր այցելութիւններէն, անխոնջ մարտիկի նման՝ ինկաւ պատնէշին վրայ, զօրացած Ս. Եկեղեցւոյ խորհուրդներով եւ երկնային օրհնութեամբ:

1976 թուականէն ասդին, լուսահոգի Հ. Սերորէ Կրդ. Ագըլեան, իր կեանքի եօթանասնամեակի սեմին, սիրով ընդառնած էր Միաբանութեան Մեծաւորներու յետին փափաքին, եւ վերստին ըստանձնած Սեւրի Սամուէլ–Մուրատեան Վարժարանի ղեկը, զերդփորձառու նաւապետ եւ հմուտ դաստիարակ, պատանի հայորդիներու սիրով առլցուն: Անիկա արդէն իր երիտասարդ գարուններէն տասնեակնէն բացած էր երբեմն Սէն գետի ափերուն, սուրբ խորանին հետ՝ դասասեղանն ընտրելով որպէս անառիկ բերդ իր առաքելութեան (1949–1964): Եւ ահա՝ տասներկու տարի ետք՝ հին ու նոր սաներու եւ բարեկամներու փաղանդ մը եռանդազին կը շրջապատէր զինք նորէն, վարժարանի կեանքին համար վերելքի եւ վերանորոգումի նոր շրջան մը երազելով:

Աւա՛ղ... կը բեկանէր յանկարծ մեծ սիւնը, կ'իյնար քաջ նաւապետը՝ կեանքի դժբախտ հարուածէն:

Բայց կը մնայ անոր պայծառ օրինակը, որպէս գրաւիչ ու բեղուն դադափարական մը, կանթեղ մը լուսաշող, որ իր լոյսին կը հրաւիրէ վեհանձն հոգիներ, խիղախօրէն շարունակելու համար անոր շնորհալի դործը, Մխիթարի օրհնութեամբ նուիրականացած եւ Ալիշանի սրբատառ կնիքով մեզի ժառանգութիւն դարձած:

Մենք յուզումով ու եղբայրական խոնարհ զգացումներով կ'արձանագրենք այս համեստ տողերը, իւրեւ սրտազին փունջ՝ Հ. Սերորէ Կրդ. Ագըլեանի դամբանին, որ Ս. Ղազարի մեծ վաստակաւորներու շարքին՝ կը ճառագայթէ լոյս եւ խրախոյս ապագայ սերունդներուն:

* * *

Հ. Սերորէ Կրդ. Ագըլեան ծնած է Մարաշ, 1910ի (թերեւս՝ 1909ի) Յուլիսի 10ին. բարեպաշտ ու բազմանդամ ընտանիքի դաւակ, սուրբ աւագանէն կոչուած Կարապետ–Նազարէթ, նախ՝ իր ծննդավայրին մէջ կը ստանայ իր անդրանիկ կրթութիւնը, ապա՝ Հալէպ, ուր առժամապէս տեղաւորուած էին ընտանիքով, աքսորի դռն օրերէն ետք:

Հայրը՝ Նշան, իսկ մայրը՝ Մարիամ Գուլաքսըզեան, տեղահանութեան տառապանքները քաջութեամբ կրելով՝ քրիստոնէական հաւատքի համար խոստովանողի օրինակելի վկայութիւն մը տուած էին, որ անջինջ պիտի դրոշմուէր իրենց զաւակներու սրտերուն մէջ:

Կրօնասէր պատանին, Հալէպէն Մարսիլիա ուղեւորութեամբ, 1925ի Օգոստոսի 9ին կը հասնի Ս. Ղազար, զինուորագրուելու Մեծն Մխիթարի հոգեւոր որդիներու շարքին: 1923-26ի շրջանին՝ Ս. Ղազար կը գտնուէր նաեւ Կարապետի մեծ եղբայրը՝ Գրիգոր: Երազներու կղզիին մէջ՝ աստուածանուէր գաստիարակներու (Հ. Ղեւոնդ Տալեան, Հ. Կիւրեղ Քիպարեան, Հ. Տիմոթէոս Տէր-Կիւլեան) եւ հմուտ ուսուցիչներու առաջնորդութեամբ (Հացունի, Ղազիկեան, Թովմաճան, Փէչիկեան) յաջողութեամբ կ'աւարտէ լսարանական ուսումները՝ 1930ին: Յաջորդ տարին՝ ուխտերով կ'անդամակցի Մխիթարեան Միաբանութեան. այնուհետեւ կը յաճախէ Ս. Անսելմոսի Կաճառին իմաստասիրութեան եւ աստուածաբանութեան բաժինները, Հոռմի մէջ, 1931-1937:

1936ի Հոկտ. 18ին, հինգ ընկերներով, կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, Ս. Ղազարի մէջ, Գրգ. Աղաճանեան Եպիսկոպոսէն ստանալով սուրբ օծումը:

Երիտասարդ միաբան եւ նորընծայ քահանայ, նորընտիր Գրգ. Սրապիոն Ուղոսճեան Աբրահամ առաջնորդութեան օրով հասնող առաջին սերունդէն, Հ. Սերոբէ Վրդ. Աղլեան, Մեծաւորներու կարգադրութեամբ, շուտով կը թեւակոխէ ուսուցչական եւ դաստիարակութեան առարկէզ, Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին մէջ, ուր կը պաշտօնավարէ շուրջ երկու տարի, 1937-39, Հսկողապետի եւ փոխ-Ուսումնապետի պատասխանատուութիւններով, Մեծ. Հ. Գաբեզին Վրդ. Լազարեանի տեսչութեան օրով:

1940-46 զինք վը գտնենք դարձեալ Հոռմ, ուր կը յաճախէ Յիսուսեան Հայրերու Արեւելագիտութեան Համալսարանը (Istituto Orientale), հմտանալով Միջին-Արեւելքի հին պատմութեան եւ արեւելեան Եկեղեցիներու հայրախօսական, գաւառաբանական ու ծիսական հարցերուն: Կը ներկայացնէ հմտալից աւարտաճառ մը՝ Հայ Եկեղեցւոյ առաքելական ծագման մասին, որուն կը յարէ մեր Կաթողիկոսներու առաջին հաղարամեակի Գաւառանադրքի պատմութիւնը. աւարտաճառի հանդիսաւոր ելոյթին կը նախադասէ նորընտիր Միքայէլ Սրբանաւոր Աղաճանեան, 1946ի դարնան:

Համալսարանական ուսումներու կողքին՝ Հ. Սերոբէ Վրդ. երկար ժամեր կ'անցընէ Հաւատաստութեան եւ Վատիկանի պատմական դիւաններուն եւ գրադարաններուն մէջ, հաւաքելով անսպառ գիտատաղ՝ պատմահետազոտական գիծով: Մեծ երջանկութեամբ կը պատմէր՝ թէ Վատիկանի դիւանապետ Միքայէլ Սրբանաւորին բացառիկ թոյլտուութեամբ արժանի եղած էր տեսնելու, չօչափելու եւ համբուրելու մեր Կիլիկեան Թագաւորներէն՝ Լեւոն Ա.ի ոսկեղէն խոշոր կնիքներով նարօտուած նամակը, ուղղուած Իննովկենտիոս Գ. Պապին, 1199 թուականի Մայիսի 23ին:

Գիտական այսպիսի պաշարով ու խանդավառութեամբ կը վերադառնայ Ս. Ղազար, ուր կը գտնենք զինք 1946-49ի շրջանին, նախ՝ գրադարանապետի պաշտօնով: Այդ ժամանակամիջոցին՝ անխոնջ աշխատանքով ան կ'այժմէացնէ վանքին եւրոպական գրադարանին ցուցակադրումը, առաջնորդ առնելով Վատիկանի աշխարհահռչակ մատենադարանին նորատիպ ցուցակ-ուղեցոյցը եւ մատենադատական ցուցակադրումի օրինադիրքը. ու 45.000 հատոր գիրքեր կը տողանցեն իր փոքրիկ գրասեղանին առջեւէն, «Լորտ Պայրընի սենեակ» կոչուած յարկաբաժնին պատուհանին քով, մէկիկ մէկիկ դիտական քննութենէ անցընելով բոլորը:

1947-49ի երկամեայ շրջանին՝ կը վարէ Ս. Ղազարու Հայկական ձեմարանի քարտուղարի պաշտօնը, Հ. Քերոբէ Վրդ. Զրաքեանի Ատենապետութեան օրով. կ'աշխատակցի «Բազմավէպ»ին, ուր կը հրատարակէ կարեւոր թղթակցութիւններէ զատ՝, քանի մը պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ եւ բնագրական կարեւոր հատուածներ²:

Միաժամանակ ձեռք կ'առնէ նաեւ պատրաստելու նոր հրատարակութիւն մը՝ Սմբատ Սպարապետի (1208-1277) վերագրուած «Տարեգիրք»ին, ընտիր եւ հնագոյն ձեռագրի մը հետեւողութեամբ, որուն վրայ կ'աշխատի երկար ժամանակ. պատմական եւ աղբիւրագիտական հմտալից ծանօթագրութիւններով կ'օժտէ թնադիրը, կը պատրաստէ սեղմ ու բովանդակալից յառաջաբան մը, տակայն պաշտօնի փոփոխութիւններ եւ տեղափոխումներ պատճառ կ'ըլլան որ հրատարակութիւնը յապաղի³:

Այդ տարիներուն, Հ. Սերոբէ Վրդ. կը զբաղի նաեւ լուսահոգի Հ. Եղիա Վրդ. Փէչիկեանի կողքին, պատերազմէն ետք Վենետիկ ապաստանած բազմաթիւ հայ դաղթականներու մտահոգիչ հարցերով, դոհացում տալու համար անոնց նիւթական ու մանաւանդ հոգեւոր կարօտութիւններուն:

1. Կարդիմալուքեան արարողութիւնները (Ամստ. Աղաճանեան Պորք.ի Միքայէլ Սրբանաւոր ընտրուելուն առիթով) - «Բազմավէպ» 1946, թ. 3-5, էջ 79-97:
Երանաշնորհ Միքայէլ Արքեպիսկոպոս յիշատակիմ տարեկան հանդէսը՝ Միքայէլեան Հաստատութեան մէջ (Տեղեկատուութիւններ) - «Բազմավէպ» 1947, թ. 5-6, էջ 141-143:
2. Աստուածամօր վերափոխման պատմութիւնը՝ հայ մատենագրութեան մէջ (Թուղթ Դիոնիսիոսի Արքեպիսկոպոսի՝ Յաղապ Ննջման Կուսին) - «Բազմավէպ» 1947, թ. 5-6, էջ 115-119:
Առաջին խաչակրութիւնը եւ Երուսաղէմի ազատումը՝ համեմատ կիլիկեան Տարեգիրքին - «Բազմավէպ» 1949, թ. 1-2, էջ 12-19:
3. Մատենագրութիւնի նախնաց ԽՁ. - ՍՄԲԱՏԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ Տարեգիրք, տպ. Վենետիկ - Ս. Ղազար 1956, էջ ԺԶ + 260 (Հրտ. Հ. Բ. Ը. Միլոթեան Խորէն Վրդ. Լազարեանի Հիմնադրամով):

1947ի Սեպտ. 8ին կը ստանայ վարդապետական գաւաղանի իշխանութիւն՝ Ուլուհոճեան Աբրահօր ձեռքէն:

1949ի աշնան, Մեծաւորներու կարգադրութեամբ կ'անցնի Փարիզ, ուր պիտի մնայ ամբողջ տասնեւհինգ տարի, պաշտօնավարելու Սեւրի Սամուէլ-Մուրատեան մեր վարժարանին մէջ, նախ՝ որպէս հակիչ եւ ուսուցիչ, ապա իբրեւ ուսումնապետ, հուսկ՝ իբրեւ Տեսուչ (1953-1964), յաջորդելով բազմավաստակ Հ. Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեանի, որ իր քահանայական գործունէութեան յիսնամեակը եւ միեւնոյն վարժարանին մէջ Տեսուչութեան 25ամեակը տօնելէ ետք՝ կը վերադառնար Վենետիկ:

Այդ տարիներուն է որ կը հասուննայ Հ. Սերոբէ Վրդ. Ազըլեանի մէջ՝ փորձառու դաստիարակը. սիրուած եւ յարգուած ամէնքէն, նաեւ Ֆրանսահայ գաղութի պատուական անդամներէն, քաջալերուած աշակերտներու ծնողներուն ժիր աջակցութենէն, անխոնջ կը նուիրուի Սեւրի մեր վարժարանի կրթական եւ ուսումնական զարգացումին, գեղեցիկ եւ դժբախտ արդիւնքներով:

Հ. Սերոբէ Վրդ. կը սիրէր վարժարանին աշակերտները՝ իբրեւ իր հարազատ զաւակները. կարգապահութեան մէջ՝ խստապահանջ էր եւ արդարադատ. ամէն քանի առաջ՝ կ'ուզէր կերտել տղոց մէջ քրիստոնեայ հայրողին, նկարագրի տէր՝ հոգեպէս ու բարոյապէս առողջ երիտասարդը, մաքուր եւ ուղիղ սրտով օժտուած, կրօնքի եւ հայրենիքի սիրով օծուն, վսեմ դադափարներով թրծուած:

Տեղական ծրագրին առընթեր, հետամուտ հայ լեզուին ու մշակութիւնի զարգացման՝ դպրոցի սեմէն ներս, Հ. Սերոբէ Վրդ. կը ջանայ յատուկ ջարկ տալ տօնածառի հանդէսներուն, մանաւանդ՝ գրական ու թատերական ներկայացումներուն, որոնց խանդավառող ոգին է ինք, եւ նոյնիսկ եռանդուն դերուստցը կամ բեմավարը: Առիթներ էին՝ աշակերտներուն ընկերային զանազան ձիրքերը յայտնաբերելու եւ զանոնք մշակելու. առիթներ՝ ազգային պատմական յիշատակներ ոգեկոչելու, հին դիւցազներ կամ աւանդավէպեր վերարծարծելու, համագաղութային խանդավառ միջնորդութիւն մէջ:

Ու տարիները տարիներուն կը յաջորդեն՝ ուսումնական նորանոր նուաճումներով, առաջին սերունդները՝ վարժարանի կեանքէն ետք՝ համալսարան ալ կ'աւարտեն յաջողութեամբ, ու նախկին-սաներու երիտասարդ հոյ մը կը պատէ դպրոցը եւ անոր բազմավաստակ Տեսուչը՝ երախտագիտութեան ծաղիկներով: Եւ մինչ կը խորհի ապագայ երազ-ձեռնարկներու մասին, Նախախնամութիւնը այլուր կ'ուղղէ իր քայլերը:

1964ին, Ս. Ղազարի մէջ գումարուած Ընդհ. Ժողովէն Հ. Սերոբէ Վրդ. կ'ընտրուի Միաբանութեան վարիչ Մարմնին անդամ, այսինքն՝ Ընդհ. Առաջիկայ կամ խորհրդական, որով կ'անցնի Վե-

նետիկ, վեցամեակի մը համար. հոն՝ իր խնամքին կը յանձնուի միաժամանակ Տեսուչութիւնը Մուրատ-Ռափայէլեան վարժարանին, ուր պաշտօնավարած էր շուրջ երեսուն տարի առաջ, դաստիարակի իր առաջին փորձառութիւններն ստանալով:

Տեղական հարցերուն խորապէս ծանօթ, իսկոյն կը ձեռնարկէ վարժարանի հնամաշ շէնքին վերանորոգման հիմնական աշխատանքներուն. Լիդպոնի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» եւ Միլանահայ անձնուէր բարերարներու սիրալոյս օժանդակութեամբ, (Հիւսիսեան, Սրապեան, Մանուկեան, Մետիկեան, Բամպակեան, Սէֆէրեան, Սուքիասեան եւ այլ բազում ընտանիքներու), գլուխ կը հանէ հսկայ ծրագիր մը, նազելի հարսի նման գեղազարդելով երբեմնի Ծեռոպեան պալատը, հիմերէն մինչեւ մեծ դահլիճը եւ հրեշտակներու սենեակը:

Եւ ահա՛ տարուէ տարի մշակութային խանդավառ ելոյթներ արձագանդ կ'ու տան այդ հրաշակերտ կամարներուն տակ. ամէնէն փայլուններն եղան Տանթէի յորելեանին եւ Ապրիլեան մերձհաստակներու ոգեկոչումները՝ 1965ին, Վեհափառ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելութեան հանդէսը՝ 1970ին: Զենք կրնար մոռնալ ամէն տարեջրանի աւարտին սարքուած փառաշուք տօնակատարութիւնները՝ Միլանահայ գաղութի սիրելի անդամներուն մասնակցութեամբ, ո'չ ալ Բարեկենդանի շրջանին կազմակերպուած հայ երգի տօնահանդէսները՝ վարժարանին սեփական «Սայեաթ-Նովա» նուագախումբի ընկերակցութեամբ. հա՛պա կիրակնօրեայ մշակութային դասախօսութիւններու ոսկի շղթան, զոր վարժարանին քարձարգոյն դասարանի աշակերտները կը ձուլէին շաբթէ շաբաթ, ոգեկոչելու համար անցեալի մեր գրական ու պատմական մեծ գէմքերը, վերլուծելու անոնց գործը: Անյիշատակ չէ կարելի թողուլ այն հոգեւոր եւ ընկերային ուրախ պահերը՝ զոր կ'անցընէինք ամէն աշնան, խաչ-վերացի տօնին, Ազոլոյի բարձունքին վրայ, «ընդ հովանեաւ սրբոյ Նշանին», հայաձեւ զմբէթի մը օրհնութեան ներքեւ: Գեղեցիկ դադափարն ալ ունեցած էր օժտելու Ս. խաչին նուիրուած այդ փոքրիկ տաճարը՝ Ս. Գրիգոր Նարեկացիի եւ Ս. Հռիփսիմէ Կոյսին դէմքերը ցոլացնող գունազեղ մեծ ապակե-պատուհաններով: Օրհնեալ ըլլայ անոնց բարերարներուն յիշատակը:

Այդ տարիներուն՝ Հ. Սերոբէ Վրդ. առիթը կ'ունենայ երկու անգամ այցելելու Հայաստան (1966ին եւ 1969ին), վերջինը՝ Յովհ. Թումանեանի մեծ յորելեանին առիթով, որպէս հիւր Սփիւռքի հետ Մշակութային Կապի Կոմիտէին. եւ ի՞նչ խանդավառութեամբ վերադարձաւ, Հայաստանի ոսկի աշունի միջերն հետը բերելով (հինդ վեց տեսակ խաղողի ողկոյններ), բայց մանաւանդ՝ անմոռանալի ու

տպաւորիչ յիշատակներ⁴։ Ռեբելութեան բոց մը կը ճառագայթէր այդ շրջանին իր հոգիէն՝ զոր հաճոյքով կը փոխանցէր իր աշակերտներուն եւ բոլոր այցելու հիւրերուն, որոնց աչքերուն կը բանար նաեւ հայրենի տեսարաններու դունազեղ նկարները շարժուն։

Կ'այցելէ նաեւ Միջին-Արեւելք (1967), Միւրիա ու Լիբանան շուրջ քառասուն տարի ետք՝ վերադառնալով աքսորի հին օրերուն, փնտռելու համար հետքեր՝ անապատին մէջ Տէր-Ջօրի, ուրկէ միասին Վենետիկ կը բերէր անգլերեղման նահատակներու սրբազան աճիւններ, յարգանքով պահելու համար Վարժարանի մատրան մէջ, եւ անոնց պայծառ յիշատակով արծարծելու հաւատքը հայ պատանիներուն։

1970ի Ընդհ. Ժողովին՝ Հ. Սերոբէ Վրդ. կ'ընտրուի Միաբանութեան Ընդհ. Աթոռակալ (փոխանորդ՝ Ընդհ. Աբրահօր) եւ միաժամանակ խորհրդական։ Կը վերադառնայ Ս. Ղազար, կ'առանձնանայ վանքին թիւ 10 խուցը, որ կը դառնայ իրեն համար ճշնարան աղօթքի եւ աշխատանքի, դարձեալ սուղուելու պրքերու աշխարհին մէջ։ Միւրիաբան նորակերտ Ձեռագրատան Տեսուչն ալ է այժմ Հ. Սերոբէ Վրդ. Ազըլեան, որ հին օրերու երիտասարդական աշխոյժով կը ցուցակադրէ, կը դասաւորէ, կը պրպտէ մեր չորս հազար հատորի հասնող ձեռագիրները. կը պատրաստէ այժմէական ցանկեր, ընդարձակ ու համառօտ, ցանկեր՝ մանրանկարներու, ցանկեր՝ նորոգութեան կարօտ ձեռագիրներու, ցանկեր՝ հեղինակներու, ցանկեր՝ անձնանուններու, մանրանկարիչներու, պրիչներու, նուիրատուներու, ցանկեր՝ տեղանուններու, գրչութեան վայրերու, եւն... եւն...։ Յատկապէս կը պրպտէր միջնադարեան հայ տաղարաններն ու տաղասացները, եւ մտադիր էր մեծղի հատոր մը նուիրել այդ դանձերուն։ Դժբախտաբար, անակնկալ հիւանդութիւններ ու մանաւանդ 1975 թուականի վանքին մեծ հրդեհը արգելք եղան իրականացնելու իր ջերմ փափաքները։

1976ի աշնան, միաբանական Ընդհ. Ժողովէն ետք, ինչպէս ըսինք սկիզբը, դարձեալ իրեն վիճակուեցաւ Սեւրի մեր վարժարանին տեսչութիւնը. հոն վերսկսաւ իր գործը՝ նոր եւ աւելի այժմէական յայտագրով, կեդրոնական շէնքին վերակառուցման հետ՝ կըրթական ու կազմակերպչական մարզերուն մէջ ալ հիմնական բարեփոխութիւններու ծրագիրներով։

Իր երբեմնի սաներէն շատեր արդէն ընտանիքի պատուական հայրեր դարձած էին, գիտարուեստի զանազան ճիւղերու մէջ մասնագիտացած, ընկերային բարեկեցիկ դիրքերու տէր ազգայիններ, որոնք

4. Ուխտաւորի աշխարհ (Յովհ. Թումանեանի ծննդեան հարիւրամեակին առիթով) - «Բազմավէպ» 1969, թ. 11-12, էջ 322-325։

դադութային կազմակերպութիւններու սեմէն ներս ալ ունէին իրենց բարերար ազդեցութիւնը. եւ ահա՛, դպրոցին ծանօթ եւ անծանօթ բազմաթիւ քարեկամներու վեհանձն օժանդակութեամբ, քիչ ժամանակի ընթացքին, հնարաւոր դարձան հայթայթել որոշ ծախքեր, հիմնական նկատուած բարելաւումներու իրագործումն սկսելու, որոնց արձագանքը օրը օրին աղնուօրէն կու տար Փարիզի «Յառաջ» օրաթերթը, ուր Հ. Սերոբէ Վրդ. կը սիրէր հրատարակել, մանաւանդ նուիրական յիշատակներու առիթով, ազգաշունչ եւ կրօնաբոյր յօդուածներ ալ։

Անակնկալ հիւանդութիւնը եկաւ խորտակել իր ազգօգուտ ծրագիրները, որոնք սակայն փոթորիկէն կամ այս կանխահաս ձմեռէն ետք՝ վարնանային արեւով վերստին կեանք պիտի առնեն, եւ լուսահոգի Վարդապետին կտակն ու օրինակը՝ պարարտ հողի մէջ ցանուած՝ պիտի մնայ անմահ ու միշտ բեղուն, միշտ գործօն, իր յաջորդներուն եւ մտերիմ գործակիցներուն անխնայ նուիրումով ու ճիւղերով։

Համադադութային շուքով տեղի ունեցաւ վաստակաւոր Վարդապետին յուղարկաւորութեան արարողութիւնը։ Նախ՝ Փարիզ, Սեւրի Սամուէլ-Մուրատեան Վարժարանի դահլիճին մէջ, ուր փոխադրուեցաւ մարմինը «Փոշ» հիւանդանոցէն, եւ ուր յարգանքի վերջին տուրքը ընդունեցաւ աշակերտութեան ու բազմաթիւ նախկին սաներու, բարեկամներու, դադութային ականաւոր զէմքերու, Կազմակերպութեանց ներկայացուցիչներու կողմէ։ Ցաւակցական խորին զգացումներ հաղորդել փութացած է Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ՝ Բարձրաշնորհ Տ. Սերոբէ Արքայ. Մանուկեան, որ բարեկամական ջերմ զգացումներով կապուած էր հանդուպելին հետ, տասնեակ տարիներէ ի վեր։

Հոկտեմբեր 16ին, խուռն բազմութեան մը ներկայութեան եւ աշակերտութեան տպաւորիչ մասնակցութեամբ, սուրբ Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն մատուցուած է Վարժարանի մատրան մէջ, նախագահութեամբ Ֆրանսայի Հայ Կթղ. Առաջնորդ՝ Գրպ. Տ. Գրիգոր Եպս. Ղապրոյեանի։ Յանուն Հյո. Առք. Եկեղեցւոյ՝ ներկայ եղած է Հայրպետ. Պատուիրակի Փոխանորդ՝ Գրչ. Տ. Գիւտ Եպս. Նազաչեան։ Յուղումնալից դամբանականներ եւ ողբոյնի խօսքեր ուղղած են աջակից Հայրեր՝ Վարժարանէն, բարեկամներ, ազգականներ։

Հոկտեմբեր 18ին, հանդուցեալին աճիւնները հասան Վենետիկ, հանգչելու համար Ս. Ղազար կղզին, փոքրիկ Հայաստանի սրտին վրայ, որ հոգեւոր ծննդավայրն է Միւրիաբան բոլոր Հայրերուն։

Նախագահութեամբ Միաբանութեան Ընդհ. Աբրահօր, միաբանակից բոլոր Հայրերը թափօրով եւ արցունքով առաջնորդեցին իրենց

եղբայրակից Վարդապետին մարմինը դէպի եկեղեցի: Ներկայ էին վանքի եւ Մուրատ-Ռափայէլեանի աշակերտները, բազմաթիւ բարեկամներ ու համակիրներ՝ Վենետիկէն, Միլանէն եւ Իտալիոյ դանազան քաղաքներէն: Յուշումով կը մասնակցէր Հ. Սերոբէ Վրդ.ի անդրանիկ եղբայրը՝ Գրիգոր, քեռորդիները եւ այլ ազգականներ, որոնք մեզի հետ սգակից, յուզումով, խուսկի եւ աղօթքի փունջերով կ'առաջնորդէին իրենց սիրելի եղբայրն ու քեռին՝ դէպի դերեզմաննոցը կղզեակին:

Առաւօտեան՝ մատուցուեցաւ դարձեալ պատարագ ու հոգեհանդիստ, իսկ կէսօրէն ետք՝ կատարեցինք քահանայաթաղի կարգը լըրիւ, մեր Մաշտոցին յանձնարարած բոլոր մանրամասնութիւններով, մինչ Ս. Ղազարու մեծ դանդը կը հնչէր հեծկտադին, «Ողջոյն»ի յետին արձագանգները սփռելով Վենետիկի խաղաղ լճակէն մինչեւ երկինք⁵:

Հանգչէ՛ խաղաղ, սիրելի՛ Վարդապետ, յարութեան յոյսը սրտիդ մէջ. երկնքի աստուածային լոյսը քեզի բաժին եւ վարձատրութիւն յաւերժական. օրհնեա՛լ ըլլայ եւ անթառամ մնայ յիշատակդ՝ քեզ միշտ սիրող եւ քու գործդ վեհանձնօրէն շարունակող սրտերու մէջ:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ

5. Փարիզ գտնուած վերջին տարիներուն, Հ. Սերոբէ Վրդ. ընտրուած էր Revue des Etudes Arméniennes պատմա-բանասիրական միջազգային հանդէսի Գիտական խորհուրդի անդամ: Անակնկալ մահուան գոյժն ատենելով, 1980ի հատորին սկզբնաւորութեան (Նոր Շարք, հտ. Դ.), Prof. Fr. Feydit պատուոյ բաժին մը նուիրած է Հ. Սերոբէ Վրդ. Ազըլեանի յիշատակին, իմաստասիրութեան հրաւերով: Այլ գրութիւններ՝ Հ. Սերոբէ Վ.ի մասին, տե՛ս «Հայ Բնագիտութիւն» 1980, Թ. 8-10, էջ 43, Թ. 11-12, էջ 35-37: Տե՛ս նաեւ «Յատագ» օրաթերթի մէջ, Փարիզ, 1980, Հոկտ. 14, 15, 16, Նոյեմբեր 22, 23, եւն...:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ LES LIVRES DU JOUR - RECENSIONS

Il Monofisismo nella Chiesa Armena - Storia e Dottrina -

BASILIO TALATINIAN

(Studium Biblicum Franciscanum, Ana-
cleta, 14), Franciscan Printing Press,
Jerusalem 1980, pp. 5 + 122 + 4.

Հայր Բարսեղ Թալատինեան քրիստոսաբանական հարցին շուրջ պատրաստած է իտալերէն լեզուով այս համառոտ ուսումնասիրութիւնը, իր մասնակցութիւնը բերած ըլլալու համար Բ. Վատիկանեան ժողովքով կնքուած էքումենիկ շարժումին, մաղթելով որ օգտակար ուղեցոյց մը հանդիսանայ (Ամդ, Յառաջաբան, էջ 5):

Ուսումնասիրութիւնը Երկու մասերու բաժնուած է՝ Պատմական (էջ 13-46) եւ Վարդապետական (էջ 49-106):

Պատմական համառոտ ակնարկ մը տալէ ետք Մեծ Հայքի մէջ քրիստոնէութեան ծագումին եւ Նուիրապետական կազմաւորումին (Ա. գլ., էջ 13-18), Հեղինակը կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ դիրքը առաջին երեք Տիեզերական ժողովներուն հանդէպ (Բ. գլ., էջ 19-22): Երրորդ գլուխը կ'ընդգրկէ (էջ 23-29) Քաղկեդոնի ժողովքէն (451) մինչեւ Դուինի ժողովը (551-552) երկարող տարիները, երբ Հայ Եկեղեցւոյ յարաբերութիւնները Ընդհանրական Եկեղեցիին հետ կը սկսին մթալանի, հասնելու համար մինչեւ Քաղկեդոնի Տիեզերական ժողովին դատապարտութեան (Դ. գլ., էջ 30-36):

Դուինի ժողովին յաջորդող պատմական շրջանը (552էն մեր օրերը) իր յատկանշական նկարագիրը կը ստանայ,

Հեղինակին տեսութեամբ, միութեան բազմաթիւ փորձերէն (Ե. գլ., էջ 37-46), որոնք միշտ ձախողած են՝ առաւել կամ նուազ առժամայ յաջողութիւն մը արձանագրելէ ետք:

Մենադրութեան առաջին մասին մէջ ուշադրաւ է՝ պատմադրական որոշ թերութիւններով հանդերձ՝ առաջադիւզող պատմական տեսութիւնը: Ասոր հրամայն, 551-552ի Դուինի ժողովը՝ Հայոց դիրքորոշումին մէջ Քաղկեդոնի նկատմամբ՝ միակ ճակատագրական հանդերձութիւնը կը նկատուի: Նման տեսութիւնն մը, սակայն, կարծէք չափազանց կը պարզէ հարցերը, որովհետեւ նկատի չեն առնուիր պատմական տարբեր շրջաններու երեւան բերած նոր եւ տարբեր միջավայրերը, նոր եւ տարբեր մտայնութիւնները: Այսպէս՝ վաղ-կիլիկեան եւ կիլիկեան Հայ կաթողիկոսներու (յիշելի են յատկապէս՝ Վկայատէր, Ծնորհալին, Տղան, Միխիթար) համոզումները, թէ՛ եկեղեցաբանական եւ թէ՛ քրիստոսաբանական տեսակէտներէն, որոշապէս զարգացած էին. ասոնց բաղդատմամբ՝ ժամանակակից միութեանական բանակցութիւններուն մէջ դիմացի կողմին վերաբերումը շեշտուած կերպով պահպանողական հանգամանք մը կը ցուցաբերէ, աստուածաբանական լեզուի հասկացողութեան տեսակէտէն (տե՛ս Հ. Լ. Զիֆիսլան, Համամիութենական տրամախօսութիւն մը ժ. քարուն. Բանակցութիւններ Ծնորհալիի ու Թէորփիլոսի միջեւ (Հայագիտական Մատենաշար Քաղկեդոն, Թ. 13, Վենետիկ - Ս. Ղազար 1978): Նոյնպէս՝ ցաւալի է յաջորդ շրջանի Հայոց մօտ (նախ Արեւելցիներուն, ապա Կիլիկեցիներուն) այս գրաց մտածելակերպին նահանջը: